# Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ Տավուշի մարզի Թեղուտի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի ֆիզիկայի (17 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար : Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է 2 փուլով՝ գրավոր ( հանրակրթական առարկայական ուսումնական ծրագրերին համապատասխան) և բանավոր (մանկավարժական մասնագիտական գործնական հմտություններ ):

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին ներկայացնում է՝

1.Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է ( ձև 1) ,

2. Բարձրագույն կրթության մանկավարժության որակավորման աստիճանը հավաստող ավարտական փաստաթուղթ կամ վերջին 10 տարվա ընթացքում մանկավարժական կամ ուսուցչական գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժը հաստատող քաղվածք աշխատանքային գրքույկից,

3. Անձնագրի պատճենը,

4. Ինքնակենսագրություն ( ձև 4),

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները ( առկայության դեպքում),

6. 1 լուսանկար 3x4 չափի,

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք,

8.ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են զինգրքույկ,

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են հոկտեմբերի 19 -ից մինչև նոյեմբերի 24-ը ներառյալ, ամեն օր ժ. $10^{00}$-ից $15^{00}$, բացի կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 26-ին ժամը $14^{00}$-ին Տավուշի մարզի Թեղուտի միջնակարգ դպրոցում, հասցեն գ. Թեղուտ, 6 փողոց, 13 շենք:

Տեղեկությունների համար զանգահարել 0268-97-262 հեռախոսահամարով: